Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

631.52
Հ-11

1932 ԹՎԻ

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ

ՅԵՎ

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

631.52
Հ-11

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԹԻՖԼԻՍ—1932

11.09.2013
17.079
22633

1932 Թ. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Խորհրդային Միության Ժողկոմխորհի յեվ Համկոմկուսի Կենտկոմի հուլիսի 5-ի վորոշումը

Կոլխոզների և սովխոզների գյուղական տնտեսության մեջ ձեռք բերած լիակատար հաղթանակը սովխոզներ, կոլխոզներ, վորոնք ընթացիկ տարվա ցանքի կամպանիայի հանրագումարում ընդգրկել են գարնանացանի ցանքային տարածության չորս հինգերորդականը, վկայում են այն մասին, վոր Խորհրդային Միությունը վերջնականապես ամրապնդվել է նոր սոցուղիի վրա։ Դրանով հենց Խորհրդային Միության դեպի կապիտալիզմը վերադարձի բուրժուական թեորիան վերջնականապես ջախջախված և ցաք ու ցրիվ է արված։

Կոլխոզների կուտակված փորձը, կոլխոզների աճը, մեքենա-տրակտորների կայանների կողմից կոլխոզների գարնանացանի կեսից ավելի ընդգրկելը, սովխոզների ամրապնդումը, կոլխոզային առևտրի ծավալումը հնարավորություն են ստեղծում նշանակալից չափով բարելավելու ներկա տարում բերքի գործը, վորը հանդիսանում է գյուղատնտեսական աշխատանքների ամենադժվար և ամենապատասխանատու մասը։

Ժողկոմխորհը և կուսակցության Կենտկոմն առաջարկում են խորհրդային և կուսակցության կազմակերպություններին ելնելով մեծ չափով, քան այդ յեղել է ցանքի կամպանիայի ժամանակ, կենտրոնացնելու իրենց ուժերը բերքահավաքի աշխատանքների անցկացման վրա, վորը ընորոշելու յե ամբողջ գյուղատնտեսական տարվա արդյունքները. և այդ կապակցությամբ՝ ավելի ուժեղացնում է ուշադրությունը գյուղատնտեսության խնդիրների նկատմամբ։

Ներկա բերքահավաքի կամպանիայում անհրաժեշտ է կենտրոնացնել ուժերը անցյալ բերքահավաքի կամ կամպանիաների արմատական թերությունների վերացման վրա, հատկապես հացահատիկի, ճակնդեղի, և այլ տեխնիկական մշակույթների մեծ կորուստների, բերքահավաքի ձգձգման, տրակտորային և ձիու պարկի վատ կազմակերպման, աշխատանքի անբավարար կազմակերպության, այսպես ասած, բերքահավաքի կոնվեյերային մեթոդի գործադրման և ամբողջ հացը խուրձելուց հրաժարվելու վրա։

Ժողկոմխորհը և Կենտկոմը հատուկ ուշադրություն են դարձնում բերքահավաքին, հացահատիկային, շաքարի, ճակնդեղի, բամբակի, արևածաղկի, ծխախոտի, կարտոֆիլի, կանեփի և քունջութի բերքահավաքի հետ զուգընթաց, և պահանջում է թույլ չտալ, վոր կրկնվեն շաքարի, ճակնդեղը փորելու և դուրս տանելու մեջ անցյալ տարի թույլ տված սխալները։

Կարևորագույն խնդիրները, վորոնց լուծման վրա կենտրոնացվելու յե խորհրդային և կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը, Ժողկոմխորհը և Կենտկոմը համարում են հետևյալը.

1. Բերքահավաքի ամբողջ աշխատանքի կենտրոնում պիտի դրված լինի պայքարը կորուստների դեմ։ Կորուստների դեմ պայքարի մեջ վճռական միջոցներ են հանդիսանում բերքահավաքն անցկացնել ըստ հնարավորության ամենակարճ ժամկետում ամեն կերպ ոգտագործելով վոչ միայն բարդ, այլև ամենահասարակ մեքենաներն ու գործիքները, անմիջապես և պարտադիր կերպով ամենուրեք ամբողջ հնձված հացից

5890-57

դեզեր կազմելով և արագ կերպով կալսելով։ Միաժամանակ անհրաժեշտ է պատշաճ միջոցներ ձեռք առնել —պահպանելու բերքը հափշտակումներից, անցկացնելու մանրաղնին կալսում, սահմանելու բերքի խստիվ հաշվառ, կազմակերպելու հասկերի հավաքում, գործադրելու հատիկավորսացող գործիքներ և այլն։

2. Աշխատանքի կազմակերպումը կոլխոզներում էլ ավելի մեծ չափերով պիտի ապահովի յուրաքանչյուր կոլխոզնիկի և բրիգադի շահագրգռվածությունը իր աշխատանքի հետևանքի համար։ Դրան համապատասխան պիտի ապահովել ամենուրեք բոլոր կոլխոզային բրիգադներում և խմբերում սդելշչինայի մեթոդների անցկացումը, վորպեսզի բրիգադի աշխատանքի վորակի համաձայն,— կորուստների չափը, հավաքի, կալսելու և հացի ու տեխնիկական բույսերի արտահանումը,—աշխատաորի կամ քանակապես ձեռք բերած աշխատաորերի արժեքի գնահատումը բրիգադի և բրիգադիրի համար կոլխոզի վարչության կողմից բարձրացնվի կամ իջեցնվի 10-ից մինչև 20 տոկոսի սահմաններում։

3. Յեկամուտների նատուրալ (մթերքներով) կամ դրամական մասի բաց թողնումը կոլխոզներում պիտի կատարվի յուրաքանչյուր կոլխոզնիկի ձեռք բերած աշխատաորերի քանակի ճշտիվ համապատասխանությամբ։ Կերը բաշխելիս պիտի հաշվի առնվի կոլխոզնիկի անասունների քանակը, վորպեսզի այն կոլխոզնիկները, վորոնք անասունների կեր չեն ստանում, կամ քիչ են կեր ստանում, դրա փոխարեն ստանային նատուրալ արտադրանքի ուրիշ տեսակներ, չելնելով տվյալ կոլխոզում աշխատաորի համար սահմանված նատուրալ արտադրանք տալու չափերի սահմաններից։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել, յերբ անցյալ տարի սահմանափակել են յեկամուտի նատուրալ մասի բաժին տալու չափերը այն կոլխոզնիկներին, վորոնք աշխատել են գյուղատնտեսության արտադրության մեջ և վորոշած քանակից ավելի շատ աշխատանք ունեն, վորպեսզի այդպիսով յուրաքանչյուր կոլխոզնիկի համար կարելի լինի ապահովել յեկամտի նատուրալ և դրամական մասից ավելի մեծ չափեր։

4. Անհրաժեշտ է հենց կալսելու ընթացքում կոլխոզնիկներին տալ ավանսներ ի հաշիվ յեկամուտների նատուրալ մասի, փաստորեն կալսած հացի 10-18 տոկոսով, վորպեսզի ավանսների բաշխումը, ինչպես և ամբողջ յեկամուտների բաշխումը կատարվի բացառապես աշխորերով։ Հացահատիկային մշակույթների պետական մթերումների սահմանված պլանի համաձայն, հացահատիկային արտադրանքի հանձնումն ավարտելուց և սերմֆոնդերի առանձնացումից հետո, առանց վորևե հապաղումի կոլխոզի վարչությունը կոլխոզնիկներին տալու յե պարենմթերային և կերի հացահատիկի մնացած մասը։ Դրան զուգընթաց, մի շարք կոլխոզների և ռայոնների փորձի համաձայն (Հյուսիսային Կովկասում և այլ ռայոններում) թույլ է տրվում այն կոլխոզներում, ուր դա կհամարվի անհրաժեշտ կոլխոզի կողմից, տալ ավանսներ 15-20 տոկոսի չափով ի հաշիվ կոլխոզների մեջ բաշխվելիք յեկամուտների նատուրալ մասի։

5. Արհրաժեշտ է վերացնել անցյալ տարի մի շարք ռայոններում տեղ գտած յեկամուտների դրամական մասը տալու ձգձգումները մինչև յեկամուտների վերջնական բաշխումը և գործնականում մտցնել այն դրությունը, վորպեսզի կոլխոզների կողմից հանձնած (ծախած) արտադրանքի համար ստացած դրամների հիմնական մասը տրվի կոլխոզնիկներին ավանսի կարգով՝ ըստ իրենց աշխատած աշխորերի քանակի։

6. Ժողկոմխորհն ու ԿԿՆտկոմն անթույլատրելի յեն համարում կոլխոզներում աշխորերի նատուրալ

վճարումների չափերի վորոշելով հավասարեցման մոտեցում ցուցադրելու անցյալ տարվա պրակտիկայում տեղի ունեցած փաստերի կրկնությունը, վորի հետևանքում՝ անկախ կոլխոզնիկների աշխատանքի վորակի ու արդյունքների, տարբեր կոլխոզներ կոլխոզնիկներին վճարում էին աշխորի համար միանման քանակությամբ հաց։ Բերքահավաքն անցկացնելիս և հացամթերումը կիրառելիս, յեկամուտները բաշխելիս կոլխոզում պետք է ապահովել այնպիսի դրություն, վորպեսզի լավ ցանող, բերքը խնամքով հավաքող և նրանց համար սահմանված պետական մթերումների պլանը աջող իրացնող կոլխոզներն իրենց տրամադրության տակ ունենան իրենց սեփական կարիքներին համապատասխան շատ ավելի հաց։

7. Սովխոզները և կոլխոզները ներկա բերքահավաքի կամպանիայի ընթացքում տեխնիկապես ավելի լինելու նպատակով անհապաղ բաց թողնել սովխոզների և կոլխոզների համար տրակտորներ—16.190 հատ, ավտոմոբիլներ—6.700 հատ և բերքահավաքի մեքենաներ—170 միլ. ռուբլու, այդ թվում 8500 կոմբայն, տրակտորների պահեստի մասեր—40 միլ. ռ., տրակտորների և մեքենաների նորոգման համար տեսակավոր մետաղ—12.000 տ., և յերկաթեղեն—12.000 տոննա։

Բոլոր տեղական խորհ. և կուսմարմինները առանձին ուշադրություն պետք է դարձնեն տրակտորների պարկի, մեքենաների և սայլերի նորոգությանը և բերքահավաքի համար ձիեր նախապատրաստելուն։ Պետք է զործով ապահովվի ամբողջ տրակտորային պարկի, բերքահավաքն մեքենաների աշխատանքի իսկական բարելավումը և նրանց փչացումների վերացումը։

Նկատի ունենալով պահեստի մասերի սուր պակասությունը և, վոր անհնարին է բոլոր անհրաժեշտ պահեստի մասերը մատակարարել կենտրոնացած կարգով, պետք է մոբիլիզացիայի յենթարկվեն բոլոր տեղական միջոցները տրակտորների պահեստի մասերը պատրաստելու համար։

8. Զմիջամտելով սովխոզներին և կոլխոզներին կից ՄՏ կայանների ընթացիկ գործնական աշխատանքին, տեղական խորհրդային և կուսմարմինները պետք է միաժամանակ ապահովեն առորյա իրական աջակցություն սովխոզների և ՄՏ կայանների դիրեկտորներին և հսկեն նրանց աշխատանքի վրա, նկատի առնելով, վոր բերքահավաքի ընթացքի և աշնան գյուղատնտեսական աշխատանքների՝ իբրև հիմնական տնտեսական-քաղաքական կամպանիայի աջող անցկացման համար պատասխանատու յեն, սովխոզների և ՄՏ կայանների դիրեկտորների հետ միասին՝ նաև տեղական խորհրդային և կուսմարմինները։

9. Խորհրդային Միության Ժողկոմխորհը և կենտկոմը ավտոտրակտորային և ավտոմոբիլային գործարանների, գյուղատնտեսական մեքենաների շինարարության գործարանների և տրակտորների պահեստի մասեր արտադրող գործարանների դիրեկտորների առանձին ուշադրությունն են դարձնում այն հանգամանքի վրա, վոր բերքահավաքի կամպանիայի աջողությունը բավականաչափ կախված է նրանց աշխատանքից, և առաջարկում են նրանց լիովին և ժամանակին ապահովել կառավարության հաստատած արտադրական ծրագրների կատարումը։

10. Բերքահավաքի աջող կատարումը կախված է բերքահավաքի աշխատանքները նախապատրաստելուց և կազմակերպելու աստիճանից։ Ժողկոմխորհն և կենտկոմն առաջարկում են Խորհրդային Միության Հողժողկոմատին, հենվելով կոլխոզների կուտակված փորձի և ՄՏ կայանների և սովխոզների աճած դերի վրա, սահմանել ոպերատիվ ղեկավարություն բերքահավաքի կամպանիան անցկացնելու նկատմամբ ըստ առանձին

ռայոնների և առանձին մշակույթների, ինչպես յեղավ ցանքային կամպանիայի ժամանակ, մասնավորապես հրապարակելով տեղեկություններ ըստ առանձին ռայոնների և առանձին մշակույթների՝ բերքահավաքի, արտադրանքը տեղերից ուղարկելու, նաև աշնանացանքի և սառնավարի ընթացքի մասին։

Խորհրդային Միության ժողկոմ-
խորհի նախագահ՝ ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

Համկոմկ. կենտկոմի քարտուղար՝ Ի. ՍՏԱԼԻՆ

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ 1932 ԹՎԻՆ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խորհ. Միության Հողժողկոմատի կոլեգիայի յեվ Խորհ. Միության ու Ռուսասատանի կոլխոզկենտրոնի 1932 թվի հուլիսի 11-ի վորոշումը

1. Կոլխոզի յեկամուտների նատուրալ և դրամական մասի վճարումը պիտի կատարվի յուրաքանչյուր կոլխոզնիկի վաստակած աշխորերի քանակի հետ ճիշտ համապատասխան։

2. Կոլխոզի դրամական յեկամուտներից կոլխոզնիկների մեջ բաշխվելու յե յեկամտի այն գումարը, վորը կմնա կոլխոզի դրամական պարտքերը, գյուղմիասհարկը, ապահովագրումները ծածկելուց և անբաժան ֆոնդի հատկացումները կատարելուց հետո։

3. Կոլխոզներում անբաժան ֆոնդեր ստեղծվում են կոլխոզի ընդհանուր յեկամտի 10-15 տոկոսի չափով, հանելով այդ յեկամուտներից կոլխոզի պարտքը, վորը պիտի վճարվի 1932 թ., գյուղմիասհարկի վճարման գումարները, ապահովագրական, հացահատիկային և ֆուրաժային ֆոնդերի վճարումները կապիտալ ներդրումների համար (շինարարություն, անասուններ, ինվենտարի և այլ գնումներ) կոլխոզների կողմից կատարված դրամական ծախսումները 1932 թ. հաշվվում են անբաժանելի ֆոնդերի հաշվին 10-15 տոկ.։

4. Թույլ չտալ, վորպեսզի յեկամտի դրամական մասի բաշխումը կոլխոզնիկների միջև ձգձգվի մինչև յեկամտի վերջնական բաշխումը սահմանելով այնպիսի

կարգ, վորպեսզի կոլխոզի ստանալիք դրամների հիմնական մասն իր հանձնած (ծախած) արտադրանքի համար տրվի կոլխոզնիկներին ավանսի կարգով իրենց աշխատած աշխորների քանակի համեմատ։

5. Պետական մթերումների պլանով սահմանված վաղահաս հացահատիկային մշակույթների հանձնելն ավարտելուց և սերմացու ու ֆուրաժային ֆոնդերն առանձնացնելուց հետո, մնացած պարենային և կերային հացահատիկի կոլխոզին հասանելիք մասը կոլխոզի վարչությունը բաշխում է կոլխոզնիկների միջև առանց վորևե հապաղման։ Ըստ վորում, դաշտային աշխատանքներին կոլխոզնիկների արտելային սնման համար պարենային ֆոնդ ստեղծելու և նրա ստեղծման համար չափն ու կարգը սահմանելու խնդիրը վճռում է կոլխոզնիկների ընդհանուր ժողովը։

6. Կալսելու ժամանակ կոլխոզնիկներին ավանսով տալ ի հաշիվ յեկամտի նատուրալ մասի փաստորեն կալսած հացից 10-ից 15 տոկոսի չափով։ Այն կոլխոզներում, ուր կոլխոզների կողմից անհրաժեշտ կճանաչվի այդ, ի հաշիվ կոլխոզնիկների յեկամտի նատուրալ մասի, նատուրալ ավանս տալ կոլխոզնիկների մեջ բաշխման յենթակա արտադրանքի 15-ից 20 տոկոսը։

7. Այն ամենալավ կոլխոզնիկները, վորոնք աշխատել են ամենամեծ քանակի աշխորեր, ստանալու յեն յեկամտի, ինչպես նատուրալ, նույնպես և դրամական մասի ամենամեծ չափը։ Սրա կապակցությամբ վերացնել՝ անցյալ տարի գործադրվող՝ գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատող կոլխոզնիկներին յեկամտի նատուրալ մասի վճարման չափի սահմանափակումը։

8. Ֆուրաժը բաշխելու ժամանակ հաշվի առնել կոլխոզնիկների ունեցած անասունների քանակն այնպես, վորպեսզի ֆուրաժ չստացող կամ պակաս ֆուրաժ ստացող կոլխոզնիկները դրա փոխարեն ստանան

նատուրալ արտադրանքի այլ տեսակը, չելնելով սակայն տվյալ կոլխոզում յուրաքանչյուր աշխորի համար սահմանված նատուրալ վճարումների սահմաններից (Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը)։

9. Կոլխոզնիկների ադմինիստրատիվ վարչական կազմը, անկախ նրա աշխատած աշխորերի քանակից, չպիտի ստանա ավելի նատուրալ արտադրանքի այն քանակից, վորն ստանում է միջին հաշվով տվյալ կոլխոզի մշտական բրիգադի այն կոլխոզնիկը, վորն ամբողջ տարվա ընթացքում իրեն հանձնարարված բոլոր աշխատանքները կատարել է բարեխիղճ կերպով։

10. Կոլխոզնիկների մեջ ինչպես նատուրալ, նույնպես և դրամական մասի վերջնական բաշխումը պիտի ավարտվի վոչ ուշ, քան 1933 թ. փետրվարի 1-ը։ Կոլխոզնիկի ամբողջ հաշվետարությունը, աշխորերի հաշվառքը, ինչպես և յեկամուտների բաշխումը կատարվում է որացույցային տարում — հունվարի 1-ից մինչև հունվարի 1-ը։

11. Աշխատանքի հաշվառքը պարտավորեցնել կոլխոզների վարչություններին և բրիգադիրներին, բերքահավաքի կամպանիայի ընթացքում տչալրջորեն կատարել կոլխոզնիկների աշխատանքի հաշվառքը և նրանց աշխատորերի գրանցումը աշխգրքույկներում։

12. Խորհրդային Միության Հողժողկոմատն ու Կոլխոզկենտրոնը պարտադրում են կոլխոզների վարչություններին հուլիսի ընթացքում ստուգել հաշվառքը և կոլխոզնիկների աշխորերի ցուցակագրումը նրանց աշխգրքույկներում մինչև ստուգման որը։

13. Բրիգադների կողմից բերքահավաքի բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո, կոլխոզների վարչությունները պիտի գնահատեն յուրաքանչյուր բրիգադի աշխատանքի, ինչպես գարնանացանի և շարքամեջ մշակման, նույնպես և բերքահավաքի վորակն ու բրիգադների կատարած աշխատանքի համեմատ (նվա-

17.079

ճումներ բերքի բարձրացման, լավ հնձելու, կալսելու, բերքահավաքի, հացն արտահանելու ժամկետների, հացահատիկը ՄՏՍ-ներում պահպանելու ընդհանուր առումով), բարձրացնել կամ իջեցնել բրիգադի և բրիգադների աշխատանքի արժեքի գնահատականը կամ աշխատանքի քանակը 10-ից 20 տոկոսի սահմաններում։

Խորհրդային Միության Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը պարտադրում են բոլոր հողային և կոլխոզային որգաններին, Միության Ժողկոմխորհի և Հ.Մ.Կ.Մ.-ի Կենտկոմի հուլիսի 5-ի վորոշման հիման վրա, կոլխոզնիկների բոլոր մասսաների մեջ անցկացնել լայն բացատրական աշխատանք, ձգտելով, վորպեսզի այդ բոլոր վորոշումներն ամենակարճ ժամկետում քննարկվեն կոլխոզնիկների լայն ժողովներում։

Այդ նպատակով բերքահավաքն անցկացնելու, հացամթերումների պլանը կատարելու և յեկամուտները բաշխելու ժամանակ կոլխոզներին ոգնություն հասցնելու համար, հողային և կոլխոզային որգանները պարտավոր են գործուղել ռայոններն ու կոլխոզները հրահանգչական, հաշվետարական և ագրոնոմիական անձնակազմ։

Խորհրդային Միության Հողժողկոմատի
տեղակալ՝ Ա. ՄԱՐԿԵՎԻՉ

Խորհրդային Միության և Ռուսաստանի
[illegible]խոզկ. վարչ. նախագահ՝ Ն. ՏԱՏԱՑԵՎ

ՀՀ Ազգային գրադարան
NL0295776

[illegible]ի 1-ին տպարան, Պլեխանովսկի փող. 91։

Պատվեր 850։ Գրքույկ 34։ Տիրաժ 10,000։